վերայ մեր, զի արդ և վասն որոյ պատճառի և զինչ պտուղ արժանի կարիս սպասիլ ստանալոյ ի բերմանէ այսպիսի անկարգութեան վարուց և զինչ երկիւղ կարի մերժել սիրտս մեր և ընդունելի մեզ առնել զի կացցուք 'ի մէջ այսքան նախատանաց և ամօթխածութեան 'ի ժամանակս կենաց մերոց մինչ բարեպէս գիտացաք զի ոչ ոք բնութիւն մարդոյ ծնաւ 'ի յերես երկրի զի կարօղ լինելով տացէ մեզ զկեանս անմահ և կամ վախճան յաւիտենական կենաց մերոց զամենայն զոր ինչ 'ի գազանէ 'ի բարբառոսէ 'ի արիւնայարբէ յերկիւղ որ գոլ կարէ ոչ կարէ յաւելուլ չարութիւնս իւր 'ի վերայ մեր յաւելի ինչ քան թէ մահ մի բնական 'ի վերայ բնութեան մերոյ, այս մահ ոչ ոք ետ կենաց բնական բնութեան մերոյ եթէ ոչ գործ անօրէնութեան բանական հոգւոյ մերոյ. մեք նախ գիտացաք և ծանեաք այս մահ և ապա կամաւ յանձն առաք 'ի վերայ մեր, գործօք անօրէնութեամբ ճաշակեցաք պտուղն յանդգնութեան յօրինաց և ստացաք մահ վարձս գործոց մերոց, և արդ ոչ ոք 'ի մէնջ փրծանի 'ի այս մահուանէ, և զու որ 'ի պատճառէ երկիւղէ այս մահուս թուլանաս 'ի ազատութենէ և հնազանդիս անօրինաց անա կարիճ մի մանրագոյն, և Օձ մի պիղծ, և գեղկ մի փոքրիկ, և անմարս կերակուր մի սառն կարէ տալ այս մահ բնական կենաց քոց, ուրեմն ամե-